

ՆՈՐ ՀԱԿԱԿՈՐՈՋԻԱԿԱՆ ԵՎ ՀԻԴՐՈՖՈՐ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ա. ԱՍԽԱՏՈՒՐՅԱՆ
ԻՃԺԵՆԵՐ

1954 թ. Ս. Մ. Կիրովի անվան գործարանի կենտրոնական լաբորատորիայում ռեցեպտուրա է մշակվել հակակորոզիական պատվածքների և մեկուսացման միջոցների ստացման համար, որոնք փոփոխության չեն ենթարկվում գոլորշու, արդյունաբերական ձեռնարկությունների ագրեսիվ նյութերի դազերի, խոնավության, օդի և գետնի, աղերի և թթուների լուծույթների, օդի ջերմաստիճանի խիստ տատանումների և արեգակնային ճառագայթների ներգործության տակ:

Նոր հակակորոզիական պատվածքներ պատրաստելու համար իբրև հումքային բազա ծառայում են Ս. Մ. Կիրովի անվան գործարանի կաուչուկի արտադրության կողմնակի պրոդուկտները՝ լակ-էթիլոլ, 3 և 5 մարկայի բիտում և շինարարական նյութի էթան մնացուկը՝ վուկանական սուլֆր: Այդ նյութերի կոմպլեքսը տալիս է շատ կայուն հակակորոզիական պատվածքներ:

Օգտագործելով նշված նյութերի առանձին հատկությունները, հաջողվել է ստանալ № 1 ռեցեպտուրայի թանձր լաքեր—լուծույթներ, որոնք պայմանականորեն կոչվում են ԼԷՏ—5 և ԼԷՐ—3: Այդ լաքերն օժտված են գերազանց ծածկելու ընդունակությամբ և չորանալուց հետո մեծ ամրությամբ, որը նրանց դարձնում է լիովին պիտանի պատվածք՝ նյութերը կորոզիայից պահպանելու համար:

Կազմված է նաև № 2 ռեցեպտուրայի երկրորդ կոմպլեքսը՝ բիտում, լակ-էթիլոլ և փոշիացրած տուֆ տարբեր հարաբերակցություններով, որոնք պայմանականորեն կոչվում են ԼԷՐՏ—5 և ԼԷՐՏ—3: Այդ պատվածքը, դարձնազույնից մինչև սևը, նույնպես օժտված է գերազանց պատելու ընդունակությամբ և լրիվ չորանալուց հետո տալիս է փայլուն կամ փայլատ մակերևույթ (նայած մակերևույթների բնույթին): Պատվածքի շերտը շատ

խիտ է, դժվար է ենթարկվում մեխանիկական մաշման, օժտված է մեծ հարակցող ընդունակությամբ, չի ճաքճքվում և չի շերտատվում:

№ 3 ռեցեպտուրայի երրորդ կոմպլեքսը՝ լաք-էթիլոլը և փոշիացրած տուֆը պայմանականորեն կոչվում են ԼԷՏ—Ա: Լրիվ չորանալուց հետո նա ստանում է բաց դարձնազույնից մինչև մուգ դարձնազույն երանգ և կարող է ծառայել իբրև մածիկի, ծեփող և սվաղող նյութերի փոխարինող:

Երեք տարբեր ռեցեպտուրաների նշված բոլոր կոմպլեքսները օժտված են արժեքավոր թթվահետ և ալկալիահետ հատկություններով, հիդրոֆոր և կայուն են շատ ագրեսիվ գործոնների նկատմամբ:

Ստացված լաքերը փորձարկվել են Ս. Մ. Կիրովի անվան գործարանի ԳՀԿԼ-ի լաբորատորական պայմաններում, որտեղ նրանցով ծածկում էին մետաղյա թիթեղիկները, ձողերը, փայտի կտորները, պատերի մակերեսները, որոնք չորանալուց հետո երկար ժամանակ պահվում էին բաց օդում: Այդ դեպքում նշված պատվածքների մակերեսները ենթարկվում էին արևի անմիջական ճառագայթների ներգործությանը, որոնց ջերմաստիճանը առանձին դեպքերում հասնում էր մինչև 70° C:

Ջերմաստիճանի 24 ժամվա տատանումների անկումը կազմում էր 30—40° C: Սակայն պատվածքների վիճակում նկատելի փոփոխություններ չեն դիտվել:

Երկաթյա ձողերը, որոնք ծածկվել են նշված հակակորոզիական նյութերով, թաղվել են հողի մեջ, որը պարունակում էր 30 % աղաթթու, այնուհետև զետեղվել են նույն քանակությամբ ծծմբական և ազոտական թթու պարունակող միջավայրում և մինչև 30 % ալկալի պարունակող

միջավայրում: Նշված միջավայրում փորձարկումները կատարվում էինք երեք ամիս շարունակ: Այդ ժամանակի ընթացքում ձողերը կրկնակի անգամ ենթարկվել են ստուգման, բայց նրանց մակերեւծությունը մի կորոզիա չի հայտնաբերվել:

Վերոհիշյալ հակակորոզիական պատվածքները փորձարկման են ենթարկվել հենց նույն գործարանի արտադրական պայմաններում և Նրևանի պահածոների գործարանում: Կաբելի գործարանում նրանցով պատում էին խածատման շաները և էլեկտրամեքենաշինական գործարանում՝ գալվա-

նական վաննաները (միջավայր, որը պարունակում է ծծմբական թթու և ֆտորաջրածնային միացություններ 15—20 %): Նրանք փորձարկվել են ՀՍՍՌ Շինարարության մինիստրության լաբորատորիաներում: Բոլոր փորձարկումների արդյունքները գոհացուցիչ են եղել:

Նախնական մոտավոր հաշվումներով վերևում նկարագրված հակակորոզիական միջոցների տրնտեսական էֆեկտը, ելնելով միայն Ս. Մ. Կիրովի անվան մեկ գործարանի հումքային բազայից, կկազմի տարեկան ավելի քան 10 մլն ռուբլի:

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԱՄԼԻՉՆԵՐԸ

Վ. ՄԱԳԱՏՈՎ


Ինժեներ-կոնստրուկտոր

Հայաստանի արագ աճող արդյունաբերությունը պահանջում է մեծացնել մետաղահատ հաստոցների և դարբնոցա-մամլային սարքավորման պարկը:

Այդ պահանջը հաշվի առնելով, Լենինականի մեխանիկական գործարանը ձեռնամուխ է եղել մամլային նոր սարքավորման արտադրությանը: Ներկայումս գործարանը լիովին յուրացրել է 25 տոննանոց մամլիչների արտադրությունը՝ թերթավոր սառը մամլման համար: Ռեսպոնդիկայի արդյունաբերական ձեռնարկություններում արդեն ստացվել են Լենինականի մեխանիկական գործարանի մարկայով առաջին մամլիչները: Նոր մեքենան նախագծել է Հայկ. ՍՍՌ Ժողտնտիստր-հի Մեքենաշինության և հաստոցաշինության վարչությանը կից հատուկ կոնստրուկտորական-տեխնոլոգիական բյուրոյի (ՀԿՏԲ) կուրիերները:

Մամլիչը զարգացնում է 25 տ նոմինալ ձիգ: Կրկնակի ընթացքների քանակությունը մեկ րոպեում 120 է, սողանի ընթացքը՝ $16 \div 64$ մմ:

Աշխատանքի հարմարության համար մամլիչը կարող է թեքվել. թեքման անկյունը հավասար է $0-30^\circ$: Մեքենայի հենոցը իրենից ներկայացնում է երկու տրավերսներով միացած սյունաձև կոնստրուկցիա: Այդպիսի հենոցը հեշտ է պատրաստել, նա շատ ավելի թեթև է նման մամլիչների ձուլածո հենոցներից և թույլ է տալիս զգալիորեն



Նկ. 1. 25 տոննանոց մամլիչ: